ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մայիսի 2015 թվականի թիվ 77 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԹՈՒՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆ ՆՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով՝

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011թ. դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության /նշանակման/ մրցույթի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2007 թվականի հունվարի 29-ի թիվ 6-Ն և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2007 թվականի հունվարի 29-ի թիվ 7-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 203-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության «Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 8-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 2 որոշումը, եզրակացությունը և Ա.Գաբրիելյանի 2015 թվականի մայիսի 11-ի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. 2015 թվականի մայիսի 13-ից դադարեցնել «Նոյեմբերյանի ԱԿ» ՓԲԸ տնօրենի պաշտոնակատար Արթուր Գաբրիելյանի հետ 2014 թվականի սեպտեմբերի 8-ին կնքած աշխատանքային պայմանագիրը:

2. Արթուր Գաբրիելյանին 2015 թվականի մայիսի 13-ից նշանակել «Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ տնօրենի պաշտոնում և կնքել աշխատանքային պայմանագիր չորս տարի ժամկետով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2015թ.մայիսի 13
ք.Իջևան